<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 139 Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի N 36-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2025 թվականի օգոստոսի 21-ի N 139 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2026 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու նպատակով:

Ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2026 թվականի վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի վերաբերյալ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն), 2026 թվականին Բանկի վարչական ծախսերի նախահաշվով ընդամենը ծախսերը կազմում են շուրջ 12,060.6 մլն դրամ, որը «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված Բանկի՝ 2025 թվականի վարչական ծախսերի ցուցանիշից ավելի է 6%-ով կամ շուրջ 712.1 մլն դրամով: Վարչական ծախսերի նախահաշվով նախատեսված են հետևյալ ծախսերը՝

1. Ապարատի պահպանման ծախսեր.

Վարչական ծախսերում գերակշիռ մաս են կազմում Բանկի ապարատի պահպանման ծախսերը՝ ծրագրվող ընդամենը վարչական ծախսերի 98.7%-ը:

Ապարատի պահպանման ծախսերն ընդգրկում են Բանկի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և գործուղման, ներկայացուցչական, սոցիալական ապահովության, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2026 թվականի ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվը կազմում է 11,908.0 մլն դրամ, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է 7%-ով կամ 745.6 մլն դրամով:

1.1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ.

Ապարատի պահպանման ծախսերի աճը զգալիորեն պայմանավորված է Բանկի աշխատողների միջին ամսական աշխատավարձի ցուցանիշի բարձրացմամբ: Բանկի պահպանման ծախսերում աշխատանքի վարձատրության համար հաշվարկի համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը, համաձայն որի Բանկի վարչական ծախսերով անհրաժեշտ է ապահովել միջազգային կազմակերպություններում պատշաճ ներկայացուցչություն ապահովելու և Բանկի առջև դրված նպատակներն ու գործառնություններն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում վարձատրության միջին չափին համապատասխան աշխատավարձ վճարելու հնարավորությունը:

Ըստ Տեղեկատվության, 2026թ. համար առևտրային բանկերը կանխատեսել են 1,429 հազար դրամ միջին ամսական աշխատավարձ, և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջները 2026թ. համար Բանկի միջին ամսական աշխատավարձի պլանային ցուցանիշը նախատեսվել է 1,020 հազար դրամի չափով, որը գերազանցում է 2025թ. պլանային ցուցանիշը 3%-ով: Համաձայն Տեղեկատվության, աշխատավարձի բարձրացումը միտված է չեզոքացնելու Բանկի և բանկային համակարգի միջին աշխատավարձերի միջև բացասական ճեղքվածքը, որը նշված ցուցանիշների դեպքում գնահատվել է 29%:

Միաժամանակ 2026թ.-ին աշխատակիցների կանխատեսվող թվաքանակը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 4.8%-ով՝ կազմելով 859 աշխատակից (2025թ.՝ 820 աշխատակից): Աշխատակիցների թվաքանակի աճը պայմանավորված է Բանկում ժամանակի հրամայական հանդիսացող նոր գործառույթների ստեղծմամբ (մասնավորապես՝ «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված), ինչպես նաև կրիտիկական գործառույթների ընդլայնմամբ: Վերջինիս մասով հարկ է նաև նշել, որ Համաշխարհային Բանկն իրականացրել է Բանկի վերահսկողական ռեսուրսների համեմատական վերլուծություն համանման բանկային համակարգ ունեցող երկրների կենտրոնական բանկերի հետ: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ վերահսկողական ռեսուրսների քանակով ՀՀ-ն զիջում է բոլոր ուսումնասիրված համանման երկրներին, և առկա է վերահսկողական ռեսուրսների էական դեֆիցիտ:

Ապարատի պահպանման ծախսերում «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածի գծով 2026 թվականի ծախսը նախատեսվում է 10,514.2 մլն դրամ, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է 8%-ով կամ 760.7 մլն դրամով: Աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող գումարը ապարատի պահպանման ծախսերում կազմում է շուրջ 88.3%:

1.2. Աշխատակիցների սոցիալական ապահովություն.

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերի հոդվածը նախատեսված է Բանկի անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերն իրականացնելու համար: Այս հոդվածի գծով 2026 թվականի նախահաշիվը կազմում է 639.6 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ 12%-ով կամ շուրջ 67.5 մլն դրամով ավելի: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես հաստիքների ավելացմամբ և Բանկի աշխատակիցների ուժգնացած հոսունությամբ: Այս հոդվածի գծով ծախսերը ընդամենը ապարատի պահպանման ծախսերում կազմում են շուրջ 5.4%:

1.3. Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում.

Առաջնորդվելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական նպատակների՝ գների կայունության և ֆինանսական կայունության ապահովման և ԿԲ-ի խնդիրների իրականացման գործընթացում յուրաքանչյուր աշխատակցի արդյունավետ գործունեությունն ապահովելու խնդրով՝ Բանկը կարևորում է սովորելու մշակույթի ձևավորումը, աշխատակիցների շարունակական ուսուցումն ու զարգացումը, վերլուծական և ստեղծագործական ունակությունների, հետազոտական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, քաղաքականության մշակման և վերլուծական ունակությունների զարգացումը, ֆինանսական ոլորտում կրթված մասնագետներ ունենալը և մարտահրավերներին դիմակայելու պատրաստվածությունը:

2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 682.7 մլն դրամ՝ 2025թ.–ի նկատմամբ նվազելով 7%-ով:

Այս հոդվածի ներքո պլանավորվող ծախսերն ուղղվում են.

- Բանկի անձնակազմի մասնագիտական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ

հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման և մասնագիտական որակավորման դասընթացներին ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս առաջատար կառույցներում.

- միջազգային մասնագիտական որակավորումների ստացմանը.
- փորձի փոխանակման նպատակով ուսուցողական այցերին.
- միջազգային կառույցներում Բանկի ներկայացուցչությունն ապահովելու համար անհրաժեշտ հանդիպումներին, համաժողովներին Բանկի աշխատակիցների մասնակցությանը և աշխատանքային խնդիրների իրականացման նպատակով ՀՀ տարածքում գործուղումներին.
- ռազմավարական նպատակների իրականացման համար նախագծային գործուղումներին:

2026թ.-ին նախատեսված նախագծային գործուղումները մասնավորապես ուղղվելու են.

- մրցունակ դրամավարկային քաղաքականություն մշակող թիմի շարունակական զարգացմանը, որը ներգրավված կլինի նաև միջազգային փորձագիտական աշխատանքներում և կապահովի դրամավարկային քաղաքականության՝ աշխարհում առաջատար ռազմավարության մշակումն ու ներդրումը, ինչպես նաև դրա հիմնարար տարրերի և սկզբունքների վերաբերյալ հստակ և աջակցող հանրային ընկալման ձևավորումը.
- Էլեկտրոնային վճարային համակարգի արդիականացմանը.
- Համաշխարհային բանկի RAMP ծրագրի շրջանակներում ՀՀ միջազգային պահուստների կառավարման գործընթացում ներգրավված աշխատակիցների վերապատրաստմանը:

1.4. Ներկայացուցչական ծախսեր.

Բանկի 2026 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 50.6 մլն դրամի չափով, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից նվազել է շուրջ 3.4 մլն դրամով կամ 6%-ով: Սույն հոդվածի ներքո պլանավորվող ծախսերն ուղղվում են միջազգային և տեղական կառույցների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հետ համագործակցության հաստատմանը և (կամ) պահպանմանը:

1.5. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում.

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով Բանկին վերապահված գործառույթների իրականացման համար, ինչպես նաև իր ենթակայության ներքո գտնվող տարածքային միավորների բնականոն գործունեության և դրանց միջև մշտական կապի ապահովման նպատակով Բանկը շահագործում է ավտոպարկ, որի գերակշիռ մասը կազմում են ավտոբուսներ, միկրոավտոբուսներ և հերթապահ մեքենաներ: 2026թ.-ին Բանկը նախատեսում է շահագործել 11 ավտոմեքենա (2025թ.՝ 29 ավտոմեքենա), որոնցում ներառված են թվով 4 էլեկտրական շարժիչով մեքենաներ: Ավտոմեքենաների շահագործման ծախսերը հաշվարկելիս հիմք են ընդունվել վառելիքի կանխատեսվող միջին շուկայական գները, Բանկի կողմից ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված

պայմանագրերը, նախորդ տարիների փաստացի ծախսերը: 2026թ. «Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում» հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 20.9 մլն դրամ՝ 2025թ. նախահաշվի նկատմամբ նվազելով 57%-ով՝ պայմանավորված ծառայողական ավտոմեքենաների քանակների վերանայման գործընթացով:

2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր.

Այս հոդվածի ներքո պլանավորվել են ամսագրերի և թերթերի բաժանորդագրության, մասնագիտական գրականության ձեռքբերման, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերման և այլ նմանատիպ ծախսերը: Բանկի կողմից մասնագիտական գրականության ձեռքբերումը և ֆինանսական ոլորտում մասնագիտացված և բարձր վարկանիշ ունեցող պարբերականների և էլեկտրոնային գրադարանների բաժանորդագրությունը նպատակ ունի խթանելու Բանկի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների զարգացումը: 2026թ. համար այս հոդվածը պլանավորվել է հիմնականում՝ ըստ կորպորատիվ և ինստիտուցիոնալ փաթեթների՝ հաշվի առնելով միջազգային պարբերականների կողմից կիրառվող հրապարակումների բովանդակության հասանելիության տարածման սահմանափակումները:

Արդյունքում այս հոդվածի գծով 2026թ. նախահաշիվը կազմում է 47.9 մլն դրամ՝ 10%-ով նվազելով նախորդ տարվա նկատմամբ:

3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր.

Սույն հոդվածի ներքո արտացոլվում են Բանկի վարչական շենքի և Բանկին պատկանող մյուս տարածքային կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ Բանկի ներքին կանոնակարգերով սահմանված տնտեսական նյութերի ու արագամաշ առարկաների սպառման հետ կապված ծախսերը: 2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 65.5 մլն դրամ: Այս ուղղությամբ ծախսերը նվազել են 27%-ով նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ:

4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր.

Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը ներառում են հեռախոսակապի հետ կապված ծախսերը: Պլանավորման ժամանակ հաշվի են առնվում հեռահաղորդակցման կապի համապատասխան միջոցների օգտագործման կարիքները, նախորդ տարիների փորձը, գործող պայմանագրերը և սակագները: 2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 23.9 մլն դրամ՝ մնալով գրեթե անփոփոխ նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ:

5. Չնախատեսված ծախսեր.

«ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ծախսերում ներառված է «Չնախատեսված ծախսեր» հոդվածը: Սույն հոդվածը պլանավորվել է 2026թ. համար նախատեսված ընդհանուր վարչական ծախսերի (բացառությամբ՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների) 1%-ի չափով:

Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի.

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2026 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 8,113.6 մլն դրամ, որը 2025 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 103.3 մլն դրամով:

Սույն հոդվածի ներքո նախատեսվում է իրականացնել Բանկի գործունեության անընդհատությունն ապահովող մի շարք միջոցառումներ:

6. Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում

Բանկը գլխավոր մասնաշենքում շահագործվող սերվերային տարածքները և վերջիններիս աշխատանքն ապահովող հովացման, էլեկտրասնուցման և հրդեհաշիջման համակարգերը շահագործվում են 2010թ-ից: Այս համակարգերի մի մասը խափանված է, մյուս մասը՝ բարոյապես մաշված, ուստի չեն կարող ապահովել կրիտիկական համակարգերի անընդհատությունը: Սույն կապիտալ վերանորոգման աշխատանքների համար 2025թ. Բյուջեում նախատեսված 468.3 մլն դրամի չափով կապիտալ ներդրումները ամբողջությամբ տեղափոխվել են 2026թ.:

2026թ.-ին նախատեսվել են նաև որոշ աշխատանքներ ԿԲ-ին պատկանող շինությունների կապիտալ վերանորոգման գծով 307.2 մլն դրամի չափով:

7. Համակարգչային տեխնիկայի, ծրագրային ապահովման, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում

Համակարգչային տեխնիկայի, ծրագրային ապահովման, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված ներդրումների ծրագիրը կազմում է 2,338.1 մլն դրամ, ինչը ենթադրում է 38% աճ նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ: Աճը պայմանավորող հիմնական գործոնը Բանկի ռազմավարությունից բխող ԷՎՀ համակարգի արդիականացման մասով նախատեսված կապիտալ ներդրումներն են:

8. Կապիտալ ներդրումներ ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում

2026թ.-ին Բանկը խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումների ներքո նախատեսվում է 5,000.0 մլն դրամի չափով ներդրում դուստր ընկերության կանոնադրական կապիտալում՝ պայմանագրով պլանավորված ներդրումների կատարումն ապահովելու և նախանշված արդյունքին հասնելու նպատակով:

9. Վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներ 2026թ.-ին չեն նախատեսվել:

Ամփոփելով վերը նշվածը, գտնում ենք, որ Բանկի կողմից ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար ներկայացված Բանկի խորհրդի 2025 թվականի օգոստոսի 21-ի N 139 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2026 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը կազմված են օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: